

158

L. II. 2.

Ի ՍՏՅՆԱԴԱՐԱՆԷ
ՍԷԼԻՆԻ ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ
ՓԱՆԾԱՆՑ
БИБЛИОТЕКИ
Мелько́на Каспа́ровича
ШАНГЕ́ВА.
№ 1279

р

7

6

III

五

LL

U.

10

1

10/10/10

1875

100

THE UNIVERSITY OF CHICAGO

6

11111
11111

 β

β m

6.

—

附

U.-

Isma

only

2, 14

Pl

6/10

Am

17.

Sum

47

7
(m)

m
 i

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԵԼ՝

Յորեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաբաղադրացի բանավորները պիտի գինեն այս հասցեով. В. Ред. давай. Архангельск. Ташкент. Москва.
Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (որմուհու անունը և ցուցանակները խանութում)։

ՄԵԼԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվում են չափերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիայէն, գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Ընդ 1873 թ. „Մշակը“ կը հրատարակվի մի և նոյն պրոգրամայով։

- I. Տէրութեան կարգադրութիւններ։
 - II. Դատաստանական ժամանակագրութիւն. կարգից դուրս նախաւոր պրոցեսների կարճ տեղեկութիւններ։
 - III. Ներքին տեսութիւն. ամենանշանաւոր ժամանակակից երևոյթները մեր հայրենիքի կեանքում։
 - IV. Ըրտաքին տեսութիւն. տեղեկութիւններ քաղաքական արդեան կեանքի ընթացքի օտար պետութիւնների մէջ, նմանապէս նոցա կենսական երևոյթների, քաղված թէ ռուսական, թէ այն ամեն արտասահմանեան պարբերական հրատարակութիւններից, որոնք կայսերութեան սահմաններում թոյլ են տուած։
 - V. Բանասիրական և զանազան յօդվածները (ինքնուրոյն և թարգմանական գիտութիւնների զանազան ճիւղերից)։
 - VI. Մատենագրութիւն հայկական, ռուսական և քանի մի օտար լեզուներով հրատարակվող գրքերի քննադատութիւններ։
 - VII. Ֆէլիտօն.
 - VIII. Ընկերական ժամանակագրութիւն։
 - IX. Յայտարարութիւններ։
- „Մշակը“ կը հրատարակվի շաբաթը մի անգամ 1 մինչև 2 թերթ փոքր գրքի։ Տարեկան բաժանորդութեան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։

ԲԱՆԱՍՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ծանուցում։—Ինչ եւք արեւ է ինչ պէտք է անենք։—Ներքին տեսութիւն։ Թարգմանական գրականութիւն։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Արշակունցի։ Նամակ Վրացից։ Ներքին լուրեր։ Առաքելի տեսութիւն։ Ֆրանսիա. Գերմանիա.—Խառն լուրեր։—Առեւտրական.—Յայտարարութիւններ։—Բանասիրական։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ընդ համարը ուղարկվում է Թիֆլիսի անցիալ տարվայ բոլոր

ԲԱՆԱՍՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր և վարկուց գրութեան պատմութիւնը ու տեսութիւնը, Մ. Մ. Միստարիանց, Ս. Պետերբուրգ, 1872, Գինն է 1 ռ. 70 կոպ. Մատենական Աշխարհ, Ա. Բ. մասն, թարգմանութիւն Կ. Տէր Գալանիանց, Թիֆլիս։

„Արարատ“ ամսագրի 6-րդ համարում մի „կրիտիկա“ մեղադրում է մի մեր մատենագրական նկատողութիւնների համար, ասելով թէ նոքա լոկ մատենագրութիւններ են և ոչ հիմնաւոր քննութիւններ։ Այս մեղադրանքը արգարացի կը լինէր, եթէ մեր գիտաւորութիւնը եղած չլինէր ժամանակ առ ժամանակ ներկայացնել միայն մի „լոկ հաշիւ“ մեղանում հրատարակուած գրքերի վերաբերյալ, յայտնելով նոցա գիտաւոր արժանաւորութիւնները ու թերութիւնները, ինչպէս որ մենք հասկանում ենք։ Այլապէս չէնք էլ կարող վարկել։ „Մշակը“ էջերը այնքան նեղ և չրջափակուած են, իսկ ներքին կողմից այնքան բազմակողմանի, որ եթէ հանգամանքներն չենթարկուելով մեր գրչին ու ցանկութեանը կատարեալ ազատութիւն տայինք, կը ստիպուէինք մի և նոյն սխալները վրայ մի քանի համարում խօսել, բայց

բաժանորդներին։ Ով որ ցանկանում է այս տարի ստանալ „Մշակ“ լրագիրը, թող շուտով յայտնի։

„Մշակ“ լրագրի 2-որդ համարը տօների պատճառով դուրս կը գայ միայն յունվարի 18-ին։

տորանով կը մեղանչվինք օրագրականութեան նըշանակութեան գէժ ընդհանրացէս և „Մշակի“ ուղղութեան գէժ մասնաւորացէս։

Վերջին ժամանակներումս լոյս տեսած գրքերի մէջ առանձին մտադրութեան արժանի է Պ. Մ. Միստարիանցի հրատարակած „Կանոնաւոր և վարկուց գրութեան պատմութիւնը“։

Ամբողջ գիրքը բաղկացած է 259 ութնամյա կրօններից և պարունակում է իր մէջ իսկապէս տառը զուրկ բան, որ վերաբերում են դրոշմաբեր բուն նիւթին (1—150), հինգ յաւերած զանազան նիւթերի վրայ (150—248) և վերջապէս մի քանի ուրիշ ծանօթութիւններ (248—259)։

„Հին դարերից սկսած մինչև Պետալոցիի ժամանակը—ստում է հեղինակը գրութեան առաջին գլխում—այս գիտութեան (այսինքն վարկադրութեան) դատաւորութեան եղանակը մեքենայական էր։ Ամեն մի աշակերտի տեսողութիւնը խաղում էր խաղաղութեան կարգաւ, և աշակերտը, միայն նայելով ուսուցչի գրած օրինակին, պիտի աշխատէր մեքենայաբար օրինակել և, կամ, առաւել ճիշդ ասել, դուրս նկարել նոյն դասերը այնքան ժամանակ, մինչև որ կարողանար փոքր ի շատ յարմարացնել ուսուցչի գրած օրինակին։ Այսպիսի նախապետական դրութեան մէջ գտնվում էր և կայ մինչև այսօր ևս

ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵՒ

ԵՒ

ԻՆՉ ՊԵՏԻԷ ԱՆՆԵՔ

Երկու միջոց կայ դատողութիւն անելու համար միւր սխալ ընդհանուր դատողութիւններից և ապա անցնել մասնաւորին,—միւր մասնաւոր տեղեկութիւններից անցնել ընդհանուրին։

Առաջին ծանուցարհը հեշտ է և ձեռնտու այն անձինքներին, որք ժամանակակից ճիշդ գիտութեան հետ ծանօթ չեն... այդպէս են արել և անում են բոլոր քարոզիչները։ Հաւաքել ճիշդ փաստերը, միմեանց հետ համեմատել, քննել, նոր և անընդհատ փորձերով նրանց վերաստուգել, և ապա դուրս բերել միջին կարծիք, ընդհանուր միտք,—այդ դժուար է և մատչելի չէ ճիշդ գիտութեանց զօրկ մարդիկներին։ Աւելի հեշտ չէ ունենի տակ հաստատ հող չունեցող անհիմն դատողութիւններ անել և վճռել հարցերը բարոյականութիւնը քարոզելու մարդիկներին ամեն քայլի վրա...

Մինչև 1872 թիւը ամբողջ հայ—լրագրութիւնը քարոզում էր և ոչ թէ հեռադատում, նա չէր հաւաքում ճիշդ նիւթերը այլ շտապում էր վճռել հարցերը ինքնակամ կերպով, առանց հիմնվելու իրողութիւնների վերա։ Նա վարժապետութիւն էր անում, բայց նման էր այն հնացած և այժմ անպետք վարժապետներին, որք երեխաներին, դաս տալու ժամանակ, ամենի վրա նայում են որպէս վերացական էակների վերա, չեն քննում նախ և առաջ երեխայի բնաւորութիւնը, չեն հարցնում նորա կարծիքը, չեն ծանօթանում նորա հետ որպէս այն էակի հետ, որի վերա պէտք է ազդեն, այլ քարոզում են, դաստիարակում են, ուսուցանում են առանց հետազոտելու այն տարրը, որին դաստիարակում են...

վայելուց և կանոնաւոր գրութեան դասատուութիւնները միւր մէջ (եր. 4—6)։

Բայց անցեալ դարու վերջերից արդէն կարողացում չառ երեխի մանկավարժներ աշխատեցան վայելչագրութիւնը գիտութեան աստիճանին բարձրացնել, որով օրէնքների վրայ հիմնուած, որոնք կարող են հետեւել հիմնական կանոններին վերածուել. 1. բաժանել և դասաւորել տառերը բնական կերպով, համեմատ այն սկզբնական համանման խաղերին, որոնցից բաղկացած են դասական նոյնաձև գրքերը, զօր. ս, ա, ո, ու, կամ Լ, շ, դ, զ, չ, ջ, կամ ի, խ, ք, ֆ, և այլն։ 2. Համանման տառերի մէջ խաղերը միաշաղկ պահել, թէ գծի վրայ լինեն (ա, ս, ո), թէ գծից բարձր (ն, ծ) կամ ցածր լինեն (լ, զ)։ 3. Խաղերը միապահել իւրաքանչիւր տառի խաղերի մէջ. 5. Իւրաքանչիւր բառի տառերը միմեկի վրայ միաշաղկ հետաւորութեամբ պահել։ 6. Իւրաքանչիւր բառ իւր նախընթացից և հետևորդից այնքան հետադրել, որ ամէն բան որոշակի կարգացուի, այնպէս որ առհասարակ մի բառի առաջին տառը չառ մօտ չլինի նախընթաց բառին, և վերջին տառը յետագայ բառին։

Այս կանոնները յաջողութեամբ գործադրելու համար մանկավարժները զանազան մէտօդներ մըշակեցին։ Նշանաւոր են այս կողմից Կարստերի, Օդոյիէի, Նիդելնի, Չիլիէի, Հակմանի և ուրիշ

Այդ էր անում մեր ամբողջ հայ—օրագրութիւնը։

„Մշակը“ առաջին է եղել, որ յայտնել է, թէ նա անպայման ուսուցչի (մանաւանդ վատ ուսուցչի) դերը չէ կամենում խաղալ, այլ կամենում է վարվել հասարակութեան հետ, ինչպէս վարվում է բնագիտը բնութեան հետ. նա կամենում է հետազոտել հասարակութեան մէջ եղած, բայց անյայտ, քնած շփերը, կամենում է դարձնել պահանջները, յարուցանել պիտոյքները և դուրս բերել նոր մարդիկներին։ Այդ պատճառով „Մշակը“ ունի լայն, ընդարձակ շրջան, որովհետեւ ժողովրդին լուսաւորելու համար նա պէտք է գիմէ նայն ժողովրդին, ժողովրդական մարդիկներին մէջ իրանց պահանջների ինքնաձայնութիւնը դարձնելու համար, նա պիտի գիմէ ինքն ժողովրդի մարդիկներին...

„Մշակը“ հետազոտել է և ոչ դաստիարակել։

Եթէ „Մշակը“ իր նպատակ է դրել յարուցանել կենդանի հարցերը, յարուցանել կենսական ժողովրդի մէջ, որին նա համարում է կենդանի, բայց որի կենսական ոյժերը քնած գրութեան մէջն են գտնվում—նա յետ չէ կանգնել ոչ մի միջոցից իր նպատակին հասնելու համար. ինչպէս քիմիքորը որ քանի մի միջոցները փորձելուց յետոյ մի քիմիական նիւթ որոշելու համար, յետ չէ կանգնում նոր ներգործիչ միջոցները դործ գնելու, որք հաւանական են եղողիցս թեմաք պիտի ազդեցութիւն ունենան քննվող նիւթի որպիսութիւնը որոշելու համար... Եթէ օրինակ մի հասարակութեան մէջ ամբողջ մի դաս, մանաւանդ լուսաւորված դասը քնած է, անդործ է, չունի իր սեփական ինքնիշխանութիւն, թշնամի է առաջադիմութեան, խաղախութիւն սիրող է, ոչ թէ միայն

ների աշխատութիւնները, որոնց վրայ երկար բաւակ խօսում է հեղինակը։

Ինչնորք գլխումս պ. Միստարիանցը հայ գրութեան պատմութիւնն է անում, որի մէջ յիշում է զանազան դարերում հնարուած գրութեան ձևերը սեպագրից ու երկաթագրից սկսած մինչև փառագիրն ու փակագիրը։ Այս տեսակ տեսակ ձևերը յայտնի ցույց են տալիս այն մտքի ճշմարտութիւնը, որ գրութիւնը մինչև նոր ժամանակներ մէջ լոկ իրրեւ արուեստ մշակուել է և ոչ իբրեւ գիտութիւն։

Սորանից յետոյ հեղինակը խօսում է այն մէտօդի վրայ որ դործ գրեց իր հրատարակած վայելուց գրութեան օրինակների մէջ, որոնց համար օգուտ քաղեց զանազան եւրոպական և հայ լեզուներով հրատարակուած վայելչագրութեան օրինակները։ Թէ գրութեան և թէ տողաշարների տուած գաղափարների վրայից խաղեց և գրեց վերջնային միտքն է. Արդէն Այսրենիանը։

Գրութեան օրինակները, ինչպէս տեսնում ենք գրքի յանկից, բաղկանում են հինգ տեսակից։ առաջին տեսակի մէջ գրած են միայն սկզբնական խաղերը, կամ գրքի կազմակերպութեան տարրերը, իսկ միւսների մէջ հետզհետեւ գրած են զանազան վարժութիւններ, սկսած ամենապարզ խոշոր, միջին և մանր տառերով։ Մեզ մինչև հիմա

բացառելով՝ թէ ինչ հեռանդներն, և ինչ դրու թեան կէտին կանգնեց այն կրիզիսը (ճը գն ա ժ ա մը) որ ամբողջ վեց շաբաթ երկիրը պատճառ դառաւ խաղաւթը անձանց համար:

Թիւրքի ակն յայտնի համակրութիւնը երկրի այժմեան հանրապետական ձեւին, և նորա բարեկամական յարաբերութիւնը ձախակողմեան հանրապետական անդամոց հետ, անշափ կտորագրեց, Ազգային-ժողովի միապետական կուսակցութեան: Պարս իրանց վրէժը հանդէս, պ. Կերդընի առաջարկութեամբ և պարագլխութեամբ կազմելով մասնաժողովում, որի մէջ Թիւրքի առաջարկած մին քանի նոր սահմանադրական նախագիծները քննութեան ենթարկելուց յետոյ հերքեցին: Նորա Ա. Երաշլը Ազգային-ժողովի կողմից կազմեցին մի պատասխան պ. Թիւրքի ժողովի մէջ կարգադրած պատգամադրին: Այդ պատասխանը շատ կծու և դառն յանդիմանութիւններով լեցն էր: Քիչ մնաց որ Թիւրքը կամ բոլորովին արձակուրդ տայ, և կամ հրաւիրի ազգին ընդհանուր քուէարկութեամբ, դատաւոր լինել, իւր և ժողովի բազմութիւն համարված (!!!) միապետական անդամոց մէջ: Բայց Թիւրքը ձեռնամուխ չեղաւ մի այդպիսի ծայրայեղ միջոցի, ոչ այնքան այն պատճառաւ, որ կասկածուէր ազգի դէպի իրան ունեցած համակրութեան վերայ, որքան այն պատճառաւ, որ (այսպէս անուանուած) Րիփէի սահմանադրական օրէնքի գորութեամբ, այժմեան ժողովի անդամոց արձակվելու, պէտք է ինքն էլ արձակվէր նախագահութեան պաշտօնից: Յըրանսիան կը իշխանէ կը իշխանէ կը իշխանէ իշխանութեան մէջ, մինչև նոր ընտրութիւններ լինելը: Ինչ ասես, որ չը պատահէր երկրի հետ, այդ կարճ ժամանակամիջոցում.....

Մի կողմից ցանկանալով արձակել ժողովին, իսկ միւս կողմից վախճանով անխնայութեան (անարմիտից) առաջացող հետեւանքներէ, նա գտաւ մի նոր հնարք: Առաջարկեց ժողովին, երեսուն հոգուց բաղկացած մի նոր մասնաժողով կազմել, որ պիտի քննի իւր և ժողովի յարաբերութիւնները, և պ. Թիւրքի առաջարկած մին քանի ուրիշ սահմանադրական նոր նախագիծերը: Այդ նախագիծերից զիտու որքան է, որ ժողովը համաձայնի, մի վերին սահմանադրութեան կ'աւանդէ, որը իրաւունք ունենայ, հարկը պահանջած գէպքում, արձակել այժմեան ազգային-ժողովին, որպէս զի, նոր ընտրութիւններ ժամանակ, ազգը ունենայ կտապաբերելներ, և չենթարկվի անխնայութեան վտանգներին: Միապետականները զղացին, որ այդ կենաց և մահու հարց էր իրանց համար. այդ պատճառաւ էլ, ամեն հնարքը զործ դրին որ մասնաժողովի անդամները, առաւելագոյն իրանց մարդկերանցից լինեն: Նորա հասան իրանց նպատակին: Երեսուն հոգուց, 18-ը, միապետականներ են, իսկ 12-ը ձախակողմեան դասի հանրապետականներ...

Թիւրքը այդ գէպքումն էլ չը յուսահատվեց: Նա դիմեց իւր սովորական հին մետոդին: Գեկեմբերի 14-ի ժողովում, իւր ներքին զործոց նախարար Դիւֆուրը իւր ճառի մէջ, ամենաստիկ կերպիւ յարձակվեցաւ ձախակողմեան արմատական կուսակցութեան ձգտումներին դէմ: Այդ օրը ժողովի մէջ Գամբիւսի Լուի Բլանը պահանջում էին որ այժմեան ժողովը ցրվի, հիմնուելով այն իրողութեան վերայ, որ մի շաբաթվայ մէջ մի միլիոնի չափ ստորագրութիւն էր հաւաքուած ազգի կողմից, ժողովը արձակուելու մասին: Դիւֆուրը չը խնայեց ամենակծու խօսքերով և ծաղրերով, հակառակել այդ ձախակողմեան ներկայացուցիչներին պահանջմունքներին դէմ: Ի հարկէ, միապետական-

ներին այդ բանը շատ հաճելի էր: Նորա սկսեցին փառաւորել Թիւրքին: Խորամանկ պառաւն էլ էր էր ցանկանում... Առ երես կողմի ձախակողմեան դասի հետ, առ երես հաշովել միապետականների հետ, ընդունել տալ մասնաժողովի մէջ իւր նախագիծները, իսկ յետոյ ժամանակ կուսակցութեան գարձաւ հաշովել հանրապետականների հետ: Եւ յիշուի, երկու օրից յետոյ, նա ներկայանում է այսպէս անուանուած „երեսունեան մասնաժողովում“, խօսում է ևս, առաւել հանրապետական ոգով, պահանջում է որ ընդունեն իւր վերոյիշեալ նախագիծերը և դորանով հաշտվում ձախակողմեան դասի հետ,

Այժմ, Գրանսիան ազատ է կրիզիսից, գոնէ առ ժամանակ: Ժողովի նիստերը յետ են ձգված սոսնձի պատճառաւ, մինչև դեկտեմբեր 27-ը. Ա. Երան նորանից է կախված, թէ այս երկու շաբաթվայ մէջ կը կայանայ համաձայնութիւն մասնաժողովի և նախագահի մէջ, թէ ոչ: Կարծես թէ փոքր ինչ յոյս կայ:

Տեսնենք.....

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայում, նորա քաղաքական կեանքի վերջին օրական հարցը, նախարարութեան կրիզիսն է որ երկար խօսակցութիւններից և մեկնաբանութիւններից յետոյ, փոքր ինչ պարզ կերպարանք ստացաւ:

Այդ կրիզիսը հետեւեցաւ այն օրից երբ պալատի մէջ ընդունվեցաւ գաւառական կարգադրութիւնն և իւր պարզութեամբ և անկասկածելիութեամբ իւր իշխանութեամբ: Առաջ խօսում էին զինուորական նախարար Ֆոն-Րոօնի, և երկրորդական նախարար Ֆոն-Չէլլիսովի արձակուրդի մասին իսկ վերջերս տարածվեցաւ լուրը և իշխան Բիսմարկի, նախարարութեան նախագահութիւնից հրաժարվելու մասին: Իշխան Բիսմարկը, բացի նորանից, որ նախագահի պաշտօնն ունէր, այլ վարում էր, նոյնպէս և արտաքին գործոց նախարարութեան պաշտօնը, և համարվում էր նոյնպէս և առանձին նախարար Էլզաս-Լոտարինգայի և Լուսէնբուրգի: Կարծիք չկայ, որ զփար էր, մի մարդու այդքան զանազան գործերը միասին կատարել: Գեկեմբերի 11-ին դուրս եկաւ կայսր Վիլհելմի պաշտօնական հրամանը, որը զինակնով իշխան Բիսմարկի նախագահութիւնից արձակուրդ խնդրելու թախանձանքին նշանակում է նորա տեղը զինուորական նախարար Ֆոն-Րոօնին իբրեւ խորհրդարանի աւագ անդամին:

Այդպիսի նշանաւոր լրագրիւնները, որպիսի են „Kreuz-Zeitung“ օրոնք համարվում են իբրեւ պահանջարկի կուսակցութեան և հին ֆեոդալական իրաւունքների արտայայտող օրգան, իշխան Բիսմարկի այդ պաշտօնից հեռանալու մէջ, գտնում են իրանց կուսակցութեան յաղթանակները, Գրաֆ-Րոօնի պ. պ. Խաչկալցի, և Ֆոն-Չէլլիսովի պարագլխութեամբ: Իսկ ազատական լրագրիւնների կարծիքը այդ մասին, բոլորովին ուրիշ է: Իշխան Բիսմարկը, պահանջում է արտաքին գործոց նախարարութեան պաշտօնը, որը դարձեալ ամենանշանաւոր դերը պէտք է խաղայ Եւրոպայի քաղաքականութեան մէջ: Բացի դրանից, Բիսմարկը Իրաւունք ունի նախարարութեան խորհրդարանում ուղարկել Գեկեմբերին, իւր կողմից հարցեր տուարձարկելու համար: Այդ արդէն բաւական է, որ ցրի զանազան կարծիքները և հաստատել, թէ նորա պաշտօնը իբրեւ գերմանական կայսրութեան կանցլեր, բարձր է նախարարութեան խորհրդարանից, և թէ, կայսր Վիլհելմի համաձայնութիւնը նորա արձակուրդի մասին, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ — թեթեւեղ նորա անշափ աշխատանքը ըստ կարիքի, որը մինչև այդ օրը

ճանրարեւելում էր նախարարութեան նախագահութեան պաշտօնով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մենք լսում ենք որ Թիֆլիսի հայ-հասարակութեան բարձր շրջաններում հայոց լեզու սկսում է մօղա դառնալ... Ինչ առաջագիծութիւն է և ինչ անասելի ազնուութիւն է մեր հայերի ու հայուհիների կողմից, որ նրանք սկսում են իրանց մայրենի լեզվով անգամ հետաքրքրվել, կարգաւ և... խօսել:

Շուտաւէր գիւղից մինը հաղորդում է միւր որ այդտեղ բազմաթիւ է հիմնվել և ամբողջ ժողովուրդը մարտաւէր է դառել: Միւրը նոյն գիւղից բոլորովին տարբեր բան է հաղորդում միւր հիշված բազմաթիւ առիթով: Ասում են որ այն կալվածատէրը, որ հիմնել է բազմաթիւ նշանակել է մուսլիմ փող 5 կոպէկ, — գիւղացիներից ոչ ոք չը գնաց: Այն ժամանակ պարոնը յայտնել է որ ձրի է, — գիւղացիներից երկու երեք մարդ գնացին: Վերջապէս բազմաթիւ տէրը յայտնել է թէ ինքն հինգ հիւր կոպէկ կը տայ լուսանկար ցանկացողներին, — այն ժամանակ ամենքը գնացին: Բազմաթիւ տէրը տեսնելով, որ ամբողջ գիւղը յաճախում է բազմաթիւ մարտաւէր է դառել, կրիկն նշանակել է վարձ հինգ կոպէկ, — դարձեալ ոչ ոք չը գնաց... Վերջապէս ստիպված է եղել վճարողայն յայտնել թէ մուսլիմ և լուսնաւոր ձրի է, — և ահա քանի մի ժամանակ է որ քանի մի մարդ այդ գիւղին պայմանով օգուտ են քաղում մարմին խտակութեան համար այդ փրկարար միջոցից... Հետաքրքիր կը լինի իմանալ հաղորդած լուրերից որը ուղիղ է...

Գեկեմբերի 28-ին հիւղաբերի օրը Անգլիայում պանդխտութեան մէջ, ամենքից մոռացած վախճանվեցաւ այն մարդը, որ գեւեքեք տարի սորանից առաջ աճ ու սարսափ էր գցում ամբողջ Եւրոպայի վերա... Նա պօլէ օր III-ը մեռաւ:

Նոր տարւայ նախընթաց օրը Թիֆլիսում մի զինուորական պաշտօնակա սպանեց իրան:

Վիճակագրութիւնը տալիս է յետագայ թուանշանները թատրոնների մասին: Իտալիայում կան 348 թատրոն, Գրանսիայում 337, Գերմանիայում 194, Իսպանիայում 168, Անգլիայում 150, Ռուսիայում 44, Բելգիայում 34, Շվեյցարիայում 20, Շվեդիայում 10, Գոտտանդում 4, Թիւրքիայում 4, Եգիպտոսում 3, Սերբիայում 1:

Մեզ գրում են որ Հիւսիսային Գերմանիայից լուրեր են գալիս, որ Բալտիկի ծովի վերա մեծ փոթորիկ եղած է: Ծովի եղբայր եղած գիւղերն փոթորիկն ոչնչացրած և անհետացրած է: Գերմանիայի ամեն կողմերն զննարկներու համար օժանդակութիւն կը հաւաքվին, և նոյն խնամքն ինքն կայսրը իրան վերա առած է, որուն պատճառաւ վերան 10 միլիոն թալէր կը հասնի:

Պ. Մ. Միսնարեանցը ուղարկած է „Մշակի“ խմբագրութեան Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին հասցնելու համար որ նոր դուրս եկած „կանոնաւոր գրութեան“ մի օրինակ, և ֆրանսիական մանկավարժական մի գիրք „Histoire d'un Jardin d'enfants“, որի հեղինակն է օրիորդ Օկտավի Մասոն:

Մի երիտասարդ Եւրոպացի, որ ուսանում է Բեռլինի համալսարանում այնքան սովորեց դերմանել, որ զիմեղով ճաշի վրա տանտիկնոջ գեղեցիկ աչքիկան, ամենի առաջ յայտնեց, „ձեզ պէս հրաշալի գեղեցիկութիւն դեռ ոչ մի տեղ իմ կեանքում տեսած չեմ“: Տանտիկնիւնը ներդաշնակ, ասելով որ ընդունված չէ հասարակութեան մէջ այդ տեսակ բաները աչքիկանց հրապարակապէս ասելու: „Եւ կարծում էի, պատասխանեց Եւրոպացի երիտասարդը, որ Գերմանիայում արդէն վաճ չէ ճշմարտութիւն խօսել...“

Յունվարի 3-ին, չորեքշաբթի օրը Թիֆլիսի մեծ թատրոնում ներկայացվեցաւ հայերէն լեզվով „Բերլիոս“ դրաման: Պիեսայի ամբողջութիւնը լուր կառավարված է եղել: Բայց եթէ դերասաններից ամեն միւսին քննենք մասնաւորապէս, բացի պ. Չմիկեանից ոչ ոք իր դերի նշանակութիւնը հասկացած չէր... Այդպէս հնչաւ չէ պատմական դրաման խաղալու: Երեւելի իրատու դերասան-

նուէին, երբ մի պատմական անձ պիտի ներկայացներ, — ուսումնասիրում էր նորա կենսագրութիւնը՝ նրա ժամանակակից պատմութիւնը, այն անձի մասին զանազան քննադատական գրվածքներ, և մինչև անգամ այցելութիւն էր անում թանգարանների մէջ ժամանակի հազուադէպին ծանոթանալու, ուսումնասիրում էր այն պատմական անձի պատկերը թանգարաններում, որ ծանոթ թանայ թէ նրա հազուապէս թէ երեսի գծագրութեանը...

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՍՏՐԱՍՏՈՒՐԳ. — Ա. Ա. — Չեր երեք յոգվածները ստացանք: Երեքն էլ կը տպվին:

ԳՐԵՂԵՆ. — Վ. Մ. Ի հարկէ Չինացոց կայսրի պատկեր և Սակսոնիայի թագաւորի պատկերը հետաքրքիր երեսվորներ են: Բայց „Մշակը“ շատ փոքր թիւրք է:

ԳԵՐԵՆԴ. — Ուրիշ օրերի ստացանք „Մասիս“ բերելու համար, բայց մեզ ասեցին հաստատ աղբիւրից որ „Մասիս“ ամէ 14 օրուրի:

Յայտնում ենք, որ մեզ շատ դժուար է զանազան կողմակի յանձնաւորութիւնները կատարել, որ ստանում ենք զանազան դատաւական քաղաքներից: Գրեթե և լրագրիւնները բերել տալ մեր գործը չէ, այլ դրամաճառների գործ է:

Բացի խմբագրութենից, Թիֆլիսի բաժանորդները „Մշակին“ կարող են գրվել նոյնպէս և պ. Տատուրեանի խանութում „Дешо Лампъ“, — պ. Շաբուրովի տանը, Բամպեյնց եկեղեցուն կապած:

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	
(Յունվարի 4-ին):	
ՇԱՐԱՐԸ Ռաի (Բրոցկու)	8 " 60 "
" " միւս տեսակը	8 " 30 "
" " զապրանիցու արանցիդ	5 " 60 "
մարքը վճարած	9 " —
ՎԱՃԱՌ Մօֆօ, շատ լաւ	16 " 50 "
" " Մարտինիկովի, ցածր	14 " 50 "
ՄՈՄ	13 " 20 "

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ:	
(Գեկեմբերի 22-ին)	
ԼՈՒԴՈՆ. — մի օրուրի ամէ 32 1/2 պէնս (փոխառնակ 40 պէնս):	
ՓԱՐԻՉ. — մի օրուրի ամէ 34 1/2 սանտիմ (փոխառնակ 400 սանտիմ):	
Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ երկրորդ	—
5% Բանկի տոմսակ	1 շրջանի 94 1/2
" " " "	2 շրջանի —
" " " "	3 շրջանի —

ՄՕՍԿՎԱՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	
(Գեկեմբերի 22-ին)	
Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ	154 1/2
Երկրորդ	150 1/2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը իւր խորհրդարանի մէջ նշանակում է աճրդախօսութիւն (տօրգ) առաջիկայ յունվար ամսոյ 9-ին առանց կրկնաճրդախօսութեան (պերետորժկայ) առաւօտեան 10 ժամին, կապալով (իշարով) տալու Սօղանլուխայ այգին, որ պատկանում է նոյն դպրոցին եօթն տարի ժամանակով: Պայմանաթուղթն (կանդիգիայ) կարելի է կարգաւ Հոգաբարձութեան գիւնատան մէջ ամեն օր, բացի տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամ: